ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2023 թվականի N 1477-Ա

ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՄԱՍԻ ԴԻՄԱՑ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՈՒՄԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը վճարել 2019-2020 թվականների գործունեության արդյունքներով պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի պարտավորության 46,560,300.0 դրամ մայր գումարի և սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ դրա նկատմամբ հաշվարկված տոկոսների (տույժերի) հանրագումարի չափով, սկսած 2024 թվականի հունվարի 1-ից, հավասարաչափ եռամսյա համամասնությամբ, մինչև 2026 թվականի հունվարի 1-ը:

2. Սահմանել, որ՝

1) մինչև 2026 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական արդյունքներով առաջացած որևէ տարվա վնասների առկա-

յությունը չի կարող խոչընդոտ հանդիսանալ սույն որոշման 1-ին կետով սահմանվող՝ տվյալ տարվա եռամսյակային համամասնությամբ նախատեսված պարտավորությունների մարման համար.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո դադարեցվում է հետաձգման առաջադրված պարտավորությունների ամբողջ ծավալի նկատմամբ տոկոսների (տույժի) հաշվարկումը.

3) եռամսյակային համամասնությունները (չափաքանակները) չպահպանելու դեպքերում եռամսյակային համամասնության խախտման հետևանքով չկատարված պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տոկոսների հաշվարկումը շարունակվում է՝ մինչև այդ մասով պարտավորության մնացորդի ամբողջական մարումը:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում ապահովել «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում՝ սույն որոշմամբ նախատեսված շահութաբաժնի պարտավորության չափը հաստատելու և դրա եռամսյա համամասնությամբ վճարելու մասին որոշման ընդունումը.

2) ընդհանուր ժողովի որոշման ընդունումից հետո 15-օրյա ժամկետում ապահովել շահութաբաժինների վճարման չափի և համամասնությունների վերաբերյալ տարեկան ընդհանուր ժողովի որոշման մասին արձանագրությունից քաղվածքի ներկայացումը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

31.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ